№ 5. ՓԵՏՐՎԱՐԻ 6. 1875 ՓԵՏՐՎԱՐԻ 6. № 5.

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ, Редакція „Мшакъ.“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 9—12 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ։

«ՄՇԱԿ» լրագրի տարեգրութիւնը, 1875 թի համար, շարունակվում է։

Տարեկան գինը . . . 5 ր.
Կէս տարվանը . . . 3 „

Բացի խմբագրութիւնից կարելի է գրվել Թիֆլիսում և պ. Ծատուրեանի խանութում։ Օտարաքաղաքացիք ուղղակի դիմում են հասցեով՝ Тифлисъ, Редакція „Мшакъ.“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոխատու և խնայողական ընկերութիւններ։— Ներքին տեսութիւն։ Մի օգտաւէտ բոյս։ Ի տեղեկութիւն էջմիածնական „Արարատ“ ամսագրի ընթերցողաց։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Գառնի Բասարի գաւառից։ Նամակ Այգեհատից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Յիսուսականներ և բարձր ուսումնարաններ։ Գերմանիայի անտեսական դրութիւնը և „Volks-Zeitung“ լրագիրը։ Սովը Փոքր Ասիայի մէջ։ Ֆրանսիա։—Խառն լուրեր։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։—Բանասիրական։ Մատենագրութիւն։

ՓՈԽԱՏՈՒ ԵՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընթերցողը երևի յիշում է, թէ «Մշակը» իր ընթացքում որքան յօդվածներ է նուիրել դիւղական փոխատու և խնայողական ընկերութիւններին։ Տպվեցան առաջնորդող յօդվածներ այդ մասին, որք բացատրում էին այդ տեսակ ընկերութեան գաղափարը, դրդելով ժողովուրդը դէպի նոցա հիմնելը դիւղերում, տպվեցան յօդվածներ Ռուսաստանի մէջ օրից օր աճող, բազմաթիւ փոխատու դիւղական ընկերութիւնների մասին, վերջապէս տպեցինք և այդ տեսակ ընկերութիւնների կանոնադրութիւնը։

Լրագրի պարտաւորութիւնն է մի գաղափար բացատրել, նիւթ առաջարկել, միաք սերմանել։ Դ՝ հարկէ շատ լաւ կը լինէր, եթէ կարողանայինք մի և նոյն ժամանակ և գիւղից գիւղ ման գալ, դրդել ժողովուրդը և իրագործել փոխատու ընկերութիւնները երկրի մէջ։ Բայց այդ մեզ անհնարին էր։

Ռուսաստանում ևս նախ և առաջ զրաւականութիւնը և լրագրութիւնը յարուցին այդ խնդիրը և ապա կազմվեցան կենսաբանական ընկերութիւններ, կառավարութեան թոյլատրութեամբ, որոնք իրանց նպատակ էին դրել գործնականութեան մէջ իրագործել այն, ինչ որ գրականութիւնը և լրագրութիւնը արտայայտում էին։ Այսպիսի մի հիմնարկութիւն կայ Մոսկվայում, այնտեղի գիւղատնտեսական ընկերութեան հետ միաւորած։ Նա առնուանվում է՝ փոխատու և խնայողական գիւղական ընկերութիւնների մասնաժողով։

Թէև մի քանի անձնուէր մարդիկների ջանքով կարելի է հասնել մի, երկու այդ տեսակ գիւղական բանկերի իրագործմանը,—բայց հարկաւոր է որ լինէր մի հասարակական հիմնարկութիւն, որ աւելի նշանակութիւն և ոյժ առնենար, քան թէ մի մասնաւոր անձն։

Հարկաւոր կը լինէր վերջապէս մտածել՝ իրագործել և կազմակում մի կենսաբանական մասնաժողով, որ պաշտօնապէս հաստատված լինելուց յետոյ, իրան նպատակ դնէր գիւղերի հետ և նրանց բնակիչներից փոքր 'ի շատէ զարգացած անձերի հետ անդադար յարաբերութիւնների մէջ լինել, նպաստել նրանց մէջ այդ փոխատու ընկերութիւնների իրագործմանը՝ մի կողմից տարածելով տեղական լեզուով հեշտ և ժողովրդական ձևով հիմնարկութեան կազմակերպութիւնը բացատրող գրքոյկներ, ընկերութեան օրինակելի կանոնադրութիւնը, հաշուապահութեան գրքերի և բլանկերի օրինակները (նոյնպէս տեղական լեզուներով),—իսկ միւս կողմից, մի գիւղի մէջ յիշեալ հիմնարկութիւնը իրագործելու ցանկութիւնը նկատելուն պէս, դիմել կառավարութեանը, խնդրելով նրանից ընկերութիւն հիմնելու թոյլատրութիւն, հարկաւոր եղած ժամանակ հիմնական դումար պարտք առնելու հոգսը յանձն առնելով, և այլն։

Մեզ հասած է լուր իբր թէ Թիֆլիսում մի այդ տեսակ կենսաբանական ընկերութիւն կամ մասնաժողով, բաղկացած մեծ մասամբ կալուածատէրերից կազմվելու վրա է,—որքան այդ ճիշդ է,—չը գիտենք և երբ նպատակ ունին յիշեալ պարտքերը, իրանց բաւական բաղմաթիւ և նիւթապէս ապահոված զգալով, դիմել տէրութեանը, պաշտօնական կերպով որպէս փոխատու գիւղական ընկերութիւնների տարածման համար կենսաբանական մասնաժողով հաստատելու,—այդ նոյնպէս մեզ յայտնի չէ։

Այնու ամենայնիւ սա ուրախալի լուր է և յուսանք թէ մասնաժողովը կիրագործվի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՕԳՏԱՒԷՏ ԲՈՅՍ

Բոլոր բոյսերը այն յատկութիւն ունեն, որ իրանց արմատների միջոցով ծծում են ջուր գետնից, իսկ իրանց տերևների միջոցով կատարում են իրանց շնչառութիւնը։

Բոյսերի շնչառութիւնը, եթէ կարելի է այսպէս ասել, մաքրում է օդը։

Բայց ոչ մի բոյսի մէջ այդ յատկութիւնը հողի մէջ եղած խոնաւութիւնը իր մէջ ծծելու, զարգացած չէ այն աստիճանի, որքան Eucalyptus globulus անուանված աւստրալական ծառի մէջ։

Այդ բոյսը իր վրա ուշադրութիւն է դարձել վերջին ժամանակներս, որովհետև հետազօտութիւնը և փորձը ցոյց տուին թէ այդ բոյսի մէջ գետնից ջուր ծծելու յատկութիւնը այն աստիճանի զարգացած է, որ նորան ճահճային տեղերի վրա տնկելով, կարելի է նրա միջոցով չորացնել ճահիճները։

Ճանապարհորդները և բժիշկները, որք հետազօտում էին էվկալիպտի ներգործութիւնը տեղի առողջական պայմանների վրա, համոզված են որ այդ ծառը տնկելով, կարելի է կատարելապէս մաքրել ճահճային տեղերի օդը այն վնասակար և թոյնաւոր գոլորշիներից, որք պատճառում են տենդեր։ Այդ դէպքում բոյսի ազդեցութիւնը երկու տեսակի է՝ նախ ծծելով գետնից աւելորդ ջուրը և երկրորդ ընդունելով իր մէջ տերևների միջոցով օդի մէջ եղած գոլորշիները։

Այդ ծառը անչափ արագ է մեծանում, այնպէս որ առաջին տարի տնկելուց յետոյ, բարձրանում է 40 մինչև 50 սէնտիմէտր (մօտ $^3/_4$ արշին), իսկ երկրորդ տարի այնքան չէ մեծանում, բայց հաստանում է։ Էվկալիպտը հասնում է ահագին բարձրութեան և հաստութեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

յօրինեց

Սեղրակ Մանդինեան (Տեսուչ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի)

Հ. Էֆլաճեանց և ընկ. տպարան
1875.

Այդ վերնագրով գրքոյկը նորերումս հրատարակվել է Թիֆլիսում։ Բաղկացած է նա 46 փոքր երեսից և արժէ 25 կոպէկ։ Հրատարակողն է պ. Ա. Յովհաննիսեանը։

Մանկավարժական խնդիրը մեզանում այնքան քիչ և անկատար է մշակվել (եթէ առ հասարակ մշակվել է), որ ամեն մի աշխատանք մանկավարժութեան վերաբերութեամբ մենք պէտք է առանձին ուրախութեամբ ընդունենք։ Մեր ուսումնարանները վաղուց կարօտ էին մի սահմանադրութեան, մի որոշ և օրինակելի կանոնադրութեան, այնպէս որ մենք չենք կարող չնորհակալ չը լինել պ. Մանդինեանցից այդ տեսակ սահմանադրութիւնը մեզ առաջարկելու արած փորձի համար։

Հայերը, հակահասարակական բնաւորութիւն ունենալով և աւելի եսական և անձնական յատկութիւնների տէր մարդիկ լինելով, ճշմարիտ է կարօտ են խիստ դիսցիպլինայի ամեն տեղ, որտեղ նրանք մի հիմնարկութիւն են կազմում։ Միայն այդ դիսցիպլինան չը պէտք է հասցրած լինի մինչև երարխիական (դասակատական) սիստէմը։

Ահա, այս է, մեր կարծիքով, պ. Մանդինեանցի հեղինակութեան մէջ խոշոր պակասութիւնը։ «Խստագոյն կարգ և լիակատար հնազանդութիւն»,—ահա այն գաղափարը, որ ինչպէս ասում են, կարմիր թելի պէս, անցնում է ամբողջ գրվածքի միջով։ Գրվածքի ոգուց պարզ երևում է որ այդ դասակատական, փոխադարձ հնազանդութիւնը դպրոցի բոլոր աստիճանների վրա է կրկնվում. տեսչի իշխանութեանը ենթարկվում են աւագ վերակացուն և ուսուցիչները, աւագ վերակացուն հսկում է միւս վերակացուների վրա, վերակացուները և ուսուցիչները հսկում են պաշտօնակատար աշակերտների վրա, որոնք իրանց կողմից հսկում են մնացած աշակերտների վրա։ Սի ինչպէս միշտ երարխիական սիստէմի մէջ, այնպէս էլ այդ գրքոյկի մէջ՝ որքան բարձր է պաշտօնով մի անձն, այնքան շատ իրաւունքներ ունի նա և քիչ պարտաւորութիւններ։

Տեսուչը, պ. Մանդինեանի գրվածքի մէջ, ունի ամենից շատ իրաւունքներ, բայց ուշադրութեամբ քանի մի անգամ գրքոյկը կարդալով, մենք համոզվեցանք թէ շատ քիչ պարտաւորութիւններ են դրած նրա վրա։ Նա նստած է կարծես աներևոյթ օլիմպիական ամպերի վրա, և նրան միայն դիմում են՝ նրանից թոյլատրութիւն ստանալու, նրա համաձայնութիւն ունենալու համար և այլն։

Գրքոյկի 3 գլուխը (երես 11) աւագ վերակացու վերնագրով, եթէ այդ վերնագիրը չունենար, մենք պիտի կարծէինք թէ հեղինակը խօսում է նոյն իսկ տեսչի և նրա պարտաւորութիւնների վրա։

Քանի լինչնում ենք հեղինակի երարխիական սանդխի աստիճաններից, — այնքան աւելի ծանր պարտաւորութիւնների ենք պատահում և պակաս իրաւունքների, մինչև որ հասնում ենք պաշտօնակատար աշակերտների աստիճանին։ Այդ աշակերտների վրա հեղինակը այնքան պարտաւորութիւններ է բարձում, որ հաստատ կարելի է ասել, թէ նրանք ոչինչ սովորելու չեն իրանց ուսման ընթացքի ժամանակ։ Ինչ ուզես պիտի անեն այդ խեղճերը՝ «ամենայն օր ջուր բերէ, սպունգը թրջէ, տախտակը, կաթէդրը ուսուցչի նստարանը մաքրէ» (երես 18)։ Բայց այդ դեռ ոչինչ՝ նրանց պաշտօնը մի վտանգաւոր պաշտօն էլ է, որ կարող է փչացնել, անբարոյական դարձնել երեխայի բնաւորութիւնը, և այդ նկատում է նոյն իսկ տեսչի և նրա պարտաւորութիւնների վրա։

Քանի մի անգամ կարդացի գրքոյկը, ուզեցի գտնել նրանում մի դրական գաղափար, մի դրական միտք, մի դրական գիծ, որ ինչպէս ասում է գրքոյկի վերնագիրը, ուղղակի դիմում է դեպի դպրոցական կեանքը, դեպի դպրոցական ընկերութիւնները, դեպի դպրոցական ինքնակառավարութիւնը, դեպի դպրոցական ինքնաբերաբար ստեղծվող ընկերութիւնները, դեպի դպրոցական ինքնաբերաբար ստեղծվող ինքնակառավարութիւնը

Դժբաղդաբար այդ ծառը, որի ածելը Միջերկրական ծովի ափերին շատ աջող է, չէ կարող ընդունանալ ցրտերին և դժուար է բուսնում այն երկիրներում, որտեղ թէև ամառը տաք է, բայց պատահում է որ ձմեռը ցուրտ է լինում, ինչպէս օրինակ մեզանում։

Քանի մի տարի է որ Փօթիի և Սուխումի մէջ փորձում են զարգացնել այդ ծառը, բայց դժբաղդաբար այդ բոյսի մշակելը, որ սկզբից բաւական լաւ էր գնում, 1873—1874 թուականների խիստ ձմեռվայ ժամանակ բոլորովին խափանվեցաւ և արդէն հասակ առած ծառերը ոչնչացան....

Բայց այնու ամենայնիւ յոյս կայ որ այդ բոյսը կարող է աջողվել մեր երկրում։ Գուցէ կարելի է յիշված խիստ ձմեռը բացառութիւն կամ սովորականից դուրս մի երևոյթ համարել մեր կլիմայի վերաբերութեամբ,—այն ժամանակ չը պէտք է մեր բոլոր յոյսը կորնք որ նորոգված փորձերը աջողվելու չեն և պէտք է կարծել որ ժամանակով կը հասնենք այն հետևանքին, որ կընդունցնենք էվկալիպտի ծառը մեր կլիմային։

Բացի յիշված յատկութիւններից էվկալիպտը ունի և ուրիշ օգտաւէտ յատկութիւններ։ Դոկտոր Կօրինդէր ապացուցել է որ արդի մէջ լուծված նրա տերևների հիւթը մի հաստատ դեղ է տենդի դէմ։ Նա մինչև 50 դէպք է պատմում, երբ բժշկից այդ դեղով տենդով հիւանդներին, որոնց վերա այլ ևս խինա չէր ներգործում։ Ասում են որ կանաչ տերևների վերքերի վրա դնելը անհոտացնում է վերքերի մէջ եղած բորբոքումն։

Տ.

Ի ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԸՆԹԵՐՑՈՂԱՑ

Էջմիածնական „Արարատ“ ամսագրի խմբագրութիւնն իւր 1874 ամի Է. տետրին մէջ հրատարեց զիս ի հրապարակական պատասխանատուութիւն ի գործ դնելով այսպիսի ոճ, «պ. Զարմայր, ասաց «Արարատայ» խմբագրութիւնն, եթէ պարտաւոր կը ճանաչէս զանձնդ և կարող ես՝ պատասխանէ կամ բացատրէ՝ ա. հակառակ Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեանց՝ Զատկի օրերը սպիտակ զգեստով զարդարուելոյ նորադիր կարգը, և բ. հակառակ պատմութեան և այլն քառասուն և եօթն ժողովները փոխանակ վաթսուն և մէկի սխալները»։

Ես պարտաւոր ճանաչեցի զիս անձը և պատասխանեցի «Արարատ» ամսագրին ի 23-էն սեպտեմբերի անցեալ 1874 ամի, բացատրելով բացայայտ ապացոյցներով, նախ՝ թէ Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեանց հակառակ չէ Զատկի օրը սպիտակ զգեստով զարդարուիլը, և թէ այդ սովորութիւնդ նորադիր կարգ չէ, և ապա՝ թէ քառասուն և եօթն ազգային եկեղեցական ժողով համարելն ուղիղ է և ճիշդ, և ընդհակառակն սխալ Աբէլ արքեպիսկոպոսի բերած ժողովց թիւն վաթսուն և մէկ, ևս և՝ թէ յիշեալ Սրբազանն իւր ժողովց պատմութեան մէջ ի բաց է թողած երկու եկեղեցական ժողով, այն է՝ 432 և 726 թուականների ժողովները։

Կատարելով զիս պարտքը և «Արարատայ» հրատէրը, ես յուսով էի՝ թէ այդ ամսագիրդ ևս կը փութայ կատարել իւր պարտքը՝ տպագրելով զիս նամակը։ Բայց իմ յոյս ի թերև եկ, վասն զի «Արարատայ» խմբագրութիւնն, որպէս ծանուցանում են ինձ էջմիածնէ, վճռել է անտիպ թողուլ զիս պատասխանը։ Եթէ այսպիսի նպատակ ունէր «Արարատն» աւելորդ էր ապա նորան ինձանից հրապարակական պատասխան խնդրել, և եթէ խընդրեց՝ կարծեմ արդարութիւնն կը պահանջէր՝ տըպագրել զայդ պատասխանը։

Ծանուցանելով զայս «Արարատ» պատուելի ընթերցողաց՝ թողում եմ նոցա արդար դատաստանին յիշեալ ամսագրի այսպիսի ընթացքը։

Մոսկուա 20 յուն. Զարմայր Մ. Մսերեանց

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Ես չեմ կարծում որ լինէր մի ուրիշ քաղաք Կովկասում, որտեղ հասարակութիւնը այնքան անտարբեր լինէր դէպի հասարակական օգուտները, որքան Ալէքսանդրապօլում։ Իմ խօսքը հաստատելու համար կը պատմեմ ընթերցողին հետևեալ հանգամանքները։

Սորանից չորս տարի առաջ մի քանի պարոններ մի ուսումնարանի տեսչի խորհրդով, հասարակութեան մէջ ընկած, փող էին ժողովում, որպէս զի նոյն ուսումնարանի մէջ մի արհեստագիտական մաս բանան։—Աղնիւ միտք....Բայց վերջը... Փողերը հաւաքվեցան, ում յանձնվեցան,—տեսչին, թէ իրանց մօտ մնաց,—յայտնի չէ,—իսկ արհեստագիտական մասը մինչև այժմ չը կայ ուսումնարանում։ Հասարակութիւնն էլ հաշիւ չէ պահանջում։

Դարձեալ չորս տարին լրանալու վերա է, որ մի ուսումնարանի հոգաբարձուին յանձնվեցաւ մի գումար տեսչից հաւաքված, որ բերել տայ ուսումնարանի համար մի մանկավարժական ամսագիր։—Մինչև այժմ ոչ փողը յետ է տուած, ոչ ամսագիր կայ ուսումնարանում։

Անցեալները քանի մի թատրօնասէրներ ժողովեցին հասարակութենից փող, պատրաստեցին թատերական պարագայք, տուին մի քանի ներկայացումներ, որոնցից գոյացաւ մի բաւական նշանաւոր գումար։ Բայց թէ ուր գնաց այս հասարակական նուիրատուութիւնը, ում ձեռքն են այն պարագաները, ինչ նպատակով ներկայացումներ եղան,—հասարակութիւնը բնաւ սորա մասին ոչինչ չը գիտէ և նրան հաշիւ չեն տալիս։

Հոգևոր ուսումնարանը մի փոքրիկ ընթերցարան ունի, որ մօտ տասը տարի առաջ է բացուած և այսքան ժամանակամիջոցում քանի մի անգամ ոչնչացել է և կրկին կենդանացել։ Այդ ընթերցարանի նպատակը եղել է յարմարաւոր գրքերով և լրագրներով մի կողմից դպրոցի ուսուցչաց և ուսանողաց ծառայել, միւս կողմից էլ կամաւոր նուիրատուաց երբեմնապէս հիւր ընկալել։ Ասում են, որ կամաւոր նուիրատուներից ոմանք այն նպատակով են միայն երեքական ռուբլ բարեհաճել չնորհելու, որ ընթերցարանը տայ նոցա ամենայն յարմարութիւններ թղթախաղութեան համար... բայց տեսնելով որ իրանց նպատակին չեն հասնում, այլ ևս չեն նպաստել ընթերցարանին և նա այսպիսով խանգարվել է։ Ոմանք էլ, ունելով ստանալիք քանի մի անձերից և չը կարողանալով նրանցից այդ ապառիկները նաղդ փողով ստանալ, անդամ են եղած ընթերցարանի, որ գոնէ նոցանից փողի տեղ ստացած փոած գրքերը ընթերցարանի վրա սաղացնեն և իրանց նպատակին հասնելուց յետոյ, այլ ևս չեն ուզեցել անդամ մնալ։

Վերջին օրերումս մի երկու բարեսէր անձինքների ջանասիրութեամբ բաւական լաւ վիճակի մէջ էր այդ ընթերցարանը։ Կամենալով աւելի բարեկարգել, նոր կանոնագրութիւն ծրագրեցին, ժողով կազմեցին, կառավարիչներ ընտրեցին,—սակայն այս բոլորը գործի առաջ գնալուն մաղաչափ չօգնեց և այս բոպէիս էլ ընթերցարանը մի այնպիսի վիճակի մէջն է, որ չէ իմացվում՝ կենդանի է թէ ոչ։ Իսկ հասարակութեան մէջ հարցնող չը կայ՝ ում է գանձապետ կամ գրադարանապետ, ինչքան փող է ժողովուել, ինչքան ծախս է եղել և ուր են գնած իրեղէնները, գրքերը և լրագիրները.... Ում է հաշիւ տուել, իսկ եթէ չէ տուել, ինչի չէ տուել....

Ոչ մի կենսական խնդիր այնքան չէ զբաղեցնում մեր հասարակութեան ուշք ու միտքը, որքան այդ նզովեալ թղթախաղը, որի ջերմեռանդ տարածողը, թէ քաղաքում և թէ գիւղերում՝ հասարակութեան պատուաւոր մասն է։ Մարիկլուբը,—կը տեսնես որ քանից մինչև հարիւր տարեկան աղաներ, մի մի պապիրոս բերանում, սև և կարմիր բծերով նշված թղթիկները ձեռքերում, կանաչ սեղանի շուրջը պատած, ժամը 8-ից սկսած, մինչև գիշերվայ ժամ 2, ուրիշ բան չեն արտասանում եթէ ոչ՝ վիստ, փաս, և այն և այն.... Իշխանք, ազնուականք, պաշտօնավարք, վաճառականք, արհեստաւորք և այլն,—բոլորն էլ թղթախաղով են անցկացնում այն միջոցները, երբ բամբասելուց, լրտեսելուց, չողոքորթելուց յոգնում են.... Սրանք զբաղված մարդիկ են.... լրագիրներ և գրքեր կարդալը,—այս բանը պարապորդ մարդոց համար է....

Քաղաքային սնդուկից Ջերբիզի ձօրում ճանապարհ շինվեցաւ, գերեզմանին կպած պարտէզ շինվեցաւ,—հրքան ծախսվեցաւ այդ բաների վրա,—քաղաքացիները չեն հետաքրքրվում։ Փողոցները լապտերներով լուսաւորելու և մաքուր պահելու համար, որքան է ծախսվում տարին,—քաղաքացիք չը գիտեն և չեն էլ կամենում իմանալ։ Ամենևին հասարակութեան հոգս չէ, եթէ այն մութ և ցեխով լցուած քուչաներում գողութիւններ, անառակութիւններ, կողոպուտներ են պատահում,—հասարակութիւնը զբաղված է աւելի նշանաւոր գործով՝ թղթախաղով։

Դեկ. 28 Սկիւռնի

ՆԱՄԱԿ ԳԱՌՆԻ ԲԱՍԱՐԻ ԳԱՒԱՌԻՑ 1)

Արարատեան դաշտի վրա գտնուող բազմաթիւ գիւղօրայքը ընակեցրած են Հայ և Պարսիկ ազգերով։ Հայերի այս երկրի վերա գաղթելը, սորա անմարդաբնակ տեղերում գիւղօրայք հիմնելը, պատահում է Ռուսաց այս երկրի նուաճման յաջորդ տարում։ Այդ օրից սկսած հայ գիւղացին վարում է հողը, ցանում է ցորենը, մեծացնում է իւր զաւակը և այս բոլորը նա անում է այն ուղղութեամբ և ձևերով, ինչպէս նա վաղուց գիտէր և գործում էր Պարսկաստանում։ Երկիրը պտղաբեր լինելով հասցնում է ամեն տեսակ բերքեր. ցանում են գլխաւորապէս ցորեն, բամբակ, բրինձ, կորեկ, ձմերուկ, սեխ, և վարունգ։ Մրգաբեր այգիներից ստանում են թարմ պտուղներ առատորէն՝ խաղողը, թութը, սերգիլի, տանձ, ծիրան, խնձոր, սալոր, բալ և փշատ։

Գիւղացիք տարուան ինը ամիսը երկրագործութեամբ, և այլ դաշտային գործքերով են պարապում, այդ երկար ժամանակամիջոցում նոքա ենթարկուած են անտանելի չարչարանքների և նեղութիւնների։ Մի նոր եւրոպական մեքենայ, կամ մի այլ գործիք որով կարելի է թեթևացնել իրենց աշխատանքը, նրանց անունն անգամ լսել չեն ուզում։

Երբ սկսում են օրերը ցրտել, գիւղացիք արդէն դադարած են լինում երկրագործութիւնից, այժմ դոցա միակ պարապմունքը իրենց ոսկոր ու մսրթ դարձած անասունների կերակրելն է լինում գալու տարուան աշխատանքի համար, իսկ պարապ ժամանակները ցրտից պատսպարուելուց դիմում են գիւղի օղանները 2)։ Այս տեղերում փռուած է լինում մի եղեգնից գործած գորգ որի վրա գալիս նստում են գիւղի ազատակալները և սկսում են իրենց սովորական խօսակցութիւնը, թէ առօրեայ կեանքից և թէ անցած ու գնացած հեքիաթներից։ Օղաներում քահանայք պատուաւոր տեղն են բռնում։ Նոքա գտել են ժողովրդեան սիրելի առարկայն, այդ է „Պղնձէ քաղաքը“։

Աւելի բազմամարդ են լինում այն օղաները, ինչտեղ գումարվում են աշուղներն, սոքա էլ երգում են զանազան պարսկական երգեր, որոնք նուիրած են Շահաբասի, Քեռօղլուի և այլ պարսիկ բռնակալների յիշատակին։ Եթէ քանի մի աշուղ պատահում են միմեանց մի օղայի մէջ, ահա այդտեղ է լինում աւելի զուարճալի տեսարանը. նոքա նստում են միմեանց հանդէպ և սկսում են երգել, եթէ մէկը չը կարողացաւ երգել միւս երգողի չարունակութիւնը, նա յաղթուեց և կենթարկուի յաղթողի կողոպուտին, զրկուելով իւր միակ քնարից և այնուհետ հրապարակ դուրս գալու իրաւունքից։ Այս տեսակ օղաները գիւղերում առաջնակարգն են համարվում, իսկ երկրորդականները երևելի են իրենց մէջ կատարուող նշանաւոր անցքերով։ Այս տեղերում առանձնացած գիւղացիքն ըստ իրենց սովորական ասածին ժամանակ անցկացնելու համար թղթախաղով և այլ փող վատնող միջոցներով են զբաղուած։ Պատուելի ընթերցող գուցէ դուք զարմանաք, եթէ պատմելու լինեմ այն թշուառութիւնները, որոնք ծնունդ են այս ընդհանրացած ախտի։ Սորան անձնատուր անձինքներից ոմանք ահագին բարձրութիւնից ընկած այժմ աղքատութեան մէջն են, իսկ մի քանիներն էլ իրանց ճակատագիրն անիծելով, թողել են տունը, մերկ երեխաները, անպաշտպան ամուսինը,—Ռուսաստանը և արտասահմանն են չափում։

Գիւղացիք ձմեռը բոլորովին անգործ անաչխատանք մնալով այդ ազատ ժամանակին են թողնում հարսանիքը և այլ ուրախութեան խնջոյքները։ Հարսանեաց ձեր, սովորութիւնները վերցրած են պապական շրջանից։ Հարուստ մարդիկների տանը հարսանիքը եօթը օր ու գիշեր է տեւում։ Հարսանեաց ժամանակ թէ այր և թէ կին անխտրաբար ձեռք ձեռքի տված մի բոլորակ շրջան են կազմում պտոյտ տալով պարում են մի նահապետական եղանակով։ Իսկ այդ շրջանի մէջ տեղ ծնվում է բաբելոնեան խառնակութիւնը, որոնց ուտել խմելու ձայնը աշխարհն է թնդացնում։ Հարսանեաց ժամանակ պարպում են մի քանի տակառ ըմբելի, որի շնորհով առաջացած կռիւը և սրիւնհեղութիւնը սովորական դէպքեր են համարվում։

Ահա այս է մեր գիւղացւոց միակ պարապմունքը ձմեռը, թէև այստեղ բացառութիւնն են կազմում մի քանի փարթամացած մահտեսիներ ու մելիքները, որոնք ամեն մի գիւղում ընկած, ոմանք վաճառականութեամբ են պարապում, մի քանիսն էլ իրենց բարբարոսական միջոցներով ձեռք բերած փողի տոկոսովն են զուարճանում։

Գիւղօրայքում ինչպէս և քաղաքում կանանց սեռը փակուած կեանքն է վարում. այն կանայքը որոնց երեսի վրա տարիների սահելը թողել է ծերութեան նշոյլը, միայն նոցա երեսն է բաց լինում։ Գիւղացի աղջիկը, պարզ ու անպաճուճանք հագուստով, իւր ամօթխած դէմքով և համեստ շարժմունքով մի անմեղ արարածի է նմանում. սա օտարականի հանդիպելիս, երևանցու նման չէ թագնում, այլ անվրդով կերպով չարունակում է իւր գնացքը, երկու ձեռքը կուրծքին խաչած և աչքերը գետնին բևեռած... Գիւղօրայքում ամուսնութիւնը գրեթէ ամենքի համար պարտաւորեալ օրէնք է. հայրը իւր որդուն 17 տար. հասնելուն պէս կը պսակի իւր հաւանութեամբ ընտրած մի աղջկայ վրա։ Հարսերը 7-ը տարով չը խօսկան են մնում. նոնք իւր միտքը ուրիշին յաղորդելիս թարգման ունի տան փոքրիկներից մէկին, իսկ իւր երեսը ապահով պահելու անհարազատ հայեացքներից, ծածկում է նրան անթափանցելի ծածկոցով։

Գիւղացիք ուսումնասէր չեն։ Դպրոցների կողմից երկիրը Սահարա անապատին է նմանում։ Քսան տուն ունեցող գիւղը ունի իւր ցանկալի գինետունը, իսկ հարիւրաւոր տուն ունեցող գիւղում չը կայ մի դպրոց։ Շատերը (մեծ մասամբ հոգեւորականներից) օրինակ առնելով իրենցից մի քանիսին ծառայութեան ասպարիզում առաջ գնացողներին, կարծելով թէ իւր որդին էլ անչուշտ նոյն կոչմանն է արժանանալու, և այդ դիտաւորութեամբ ուղարկում են նոցա պրոգիմնազիա ըստ որում գրագէտ լինելը, գլխին թաւիշեայ գդակ ծածկելը, գիւղական զգեստը ատիճանաւորի փոխելը, սոքա բոլորը չլացնում են հայ գիւղացու երեսկայութիւնը.... Երջանիկ է այն գիւղացին որ արժանացել է յիշեալ փառքերին. նրա ծնողքը այդ օրից գիւղի պատուաւոր դասակարգին են պատկանում։ Աւելի մի ցաւալի երևոյթն այն է որ մեր հայաբնակ գիւղերից մի քանիսում բոլորովին մոռացած են մայրենի լեզուն, խօսելով պարսկերէն, սկսած քահանայից մինչև վերջին մանուկը։ Ինչպէս իմ նոյնպէս և շատերի կարծիքով մի ազգի կենդանութեան ամենաուժեղ կապերից մինը նրա լեզուն է, այն հասարակութիւնը որը օտարոտի է արել իւր մայրենի լեզուի գործածութիւնը, եթէ ոչ այսօր, անչուշտ վաղը կը աորրանայ նրա մէջ այն՝ որը գործածական է նրա մէջ, այդ բնական է վասն զի այն մեքենան որը կորցրել է իւր գործադրութիւնը, նա շուտով է չքանում հասարակական ասպարէզից։

19 դեկտ. Ա. Եր.

ՆԱՄԱԿ ԱՑԳԵՀԱՏԻՑ

Ինչպէս խոստացել եմ «Մշակի» 1874 թուի վերջին համարում տպուած նամակումս, որ միւս անգամ խօսեմ Լօռու հարուստների վերա, ուրեմն այժմ այս նամակիս գլխաւոր կէտը պէտք է լինի հարուստները, որք ինչպէս ասել եմ՝ ամենայն միջոցով աշխատում են ունենալ իւրեանց ձեռքի տակ բազմաթիւ մարդիկ, կամ լաւ է ասել ստրուկներ։ Լօռում քոխվա կամ սուդիա ընտրում են բոլոր ժողովրդոց ձայնով։ Ուրեմն շատ հաւանական է, որ նոքա կընտրուին, որք իւրեանց ձեռքի տակին շատ մարդիկ ունեն։

Դառնալով քոխվա, ստանում են լիակատար իշխանութիւն իրանց գիւղի բոլոր մարդոց վերա և գործ են դնում իւրեանց լիակատար ստացած իշխանութիւնը իրանց ցանկութեան համեմատ։ Իբրև իշխան բոլոր խեղճ ժողովրդոց հարստահարում են և ձգում են նոցա դառն վիճակի մէջ, որոնցից շատերը զզուած սոցա իշխանութեան վարմունքից, տարիներով կորչում են իրանց տներից, թողնելով իւրեանց կնոջը և որդոցը որբ։ Ահա այսպէս մեր պատուելի իշխանները ստանալով իշխանութիւն, գործ են դնում իրանց ոյժը և այսպիսով հարստանում են, իսկ ժողովրդոց ձգում են չքաւորութեան մէջ և պարտքի տակ։

Այս վնասների առաջը առնելու համար լաւ կը լինի, եթէ քոխվաները ընտրվեն ոչ թէ չքա-

---

1) Արարատեան դաշտի վրա գտնուող գիւղերից մի մասը իրենց վրա «Գառնի Բասար» անունն է կրում։

2) Օղան գիւղացոց գոմերի մի առանձին բաժանմունքն է, փոքր ինչ սենեկի նմանութեամբ չինուած, որը տաքանում է ձմեռը անասունների շնչառութեամբ։

ւոր մարդոց ձայնով, որք վախենալով և ստիպուած, իրանց պարտաւորոյն են ընտրում, այլ և այնպիսի մարդոց ձայնիւ, որոնք ոչ մէկից կախումն չունին։ Հաւանական է, որ վերջիններս կընտրեն այնպիսի մարդիկ, որք ոչ թէ կաշխատեն բարեկարգել իւրեանց և լցուցանել իւրեանց պակասութիւնները,— այլ ընդհակառակն հայրական խնամքով կը բարեկարգեն խեղճ ժողովրդոց և կը վարուեն նոցա հետ եղբայրաբար։ Նոքա այնուհետև իւրեանց իշխանութեան տակ եղողներին՝ փոքրից մինչև մեծը մէկ կընդունեն և կը ճանաչեն նոցա մէջ մարդկային բոլոր արժանաւորութիւնները։

Գ. Շահ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալքալաք 8-ին յունվարի

Լրագիրները հետազօտելով հասարակական երևոյթներ, սերմանելով ժամանակակից նոր մտքեր, անդադար քննադատելով կենսական խնդիրներ, անընդհատ տնտեսական հարցեր բարձրացնելով,— յառաջացնում են ազգի մէջ,—թէև ուշ,—մտաւոր շարժումն։ Եւ այսպէս ազգը առանց իմանալու կրթվում է սրտով և մտքով, լայնանում է նորա հասկացողութեան հորիզոնը, դառնում է ինքնուրոյն, անկախ մտածող։ Այս լրագրութեան անընդհատ, տոկուն աշխատանքի արդասիքն է։

Հայ լրագրութիւնը երեք տարի յառաջ ունէր այսպիսի ուղղութիւն։

Ոչ....

Ով չէ հաւատում մեզ, կարող է թղթատել անցեալ հայ լրագիրների և օրագիրների թերթերը։ Որ օրագրի կամ լրագրի մէջ մենք կը գտնէինք կեանքի վերաբերեալ յօդվածներ, քննադատութիւններ՝ տնտեսական, մանկավարժական, երկրագործական և այլ սոցա նման ժողովրդական հարցերի։ Հայոց լրագրութեան մէջ մենք կը կարդայինք վիպական թարգմանութիւններ, որոնք հազիւ թէ պիտանաւոր էին մեզ, գովեստ կամ պարսաւ այս և այն ուսումնարանի և հոգաբարձուների, չռայլ գովեստ այս և այն աղայի և վերջի վերջոյ միմեանց դէմ անտեղի վէճեր, կիրք յագեցնող աղճատանքներ։ Պարզ է որ այսպիսի լրագրութիւն ոչ թէ յառաջադիմութեան տարր էր, այլ անշարժութեան, մեռելութեան նպաստիչ։ Այս օրինակ լրագրական ուղղութիւն հարկաւ պէտք է յարուցանէր իւր դէմ սառն արհամարհանք, անտարբերութիւն և վերջապէս ատելութիւն։

Սոյն իսկ վիճակի մէջ էր հայոց լրագրութիւնը, երբ գրականական ասպարէզ իջաւ «Մշակը»։ Հասարակութիւնը, ընկած բարոյապէս և նիւթապէս, գրականական չոր ու ցամաք, վերացական դաղափարներից զզուած հասարակութիւնը, միթէ կարող էր իսկոյն սեփականել իրան նոր մտքեր, ժամանակակից դրական պահանջներ.... Բայց մի և նոյն ժամանակ միթէ այդ կը նշանակէ, որ «Մշակի» երեք տարուայ գործունէութիւնը, պաշտպանած սկզբունքները, սերմանած մտքերը իսպառ ապարդիւն մնացին։ Մեզ թւում է թէ «Երեք տարի անցաւ» առաջնորդող յօդվածը (№ 51) դէպի հասարակութեան անտարբերութիւնը՝ չափազանց յուսահատական էր։ Մի անբնական երևոյթ կը լինէր պահանջել որ մի բարոյապէս տրկացած, սեփական դատողութեան տէր չիղող հասարակութիւն՝ ամենայն պատրաստականութեամբ խմբովին ընդունէր, սեփականացնէր մտքեր, դաղափարներ, սկզբունքներ, որոնք մինչև ցայսօր անծանօթ էին նորան։ Այդ պահանջը խիստ էր...

Մենք ընդունում ենք, որ «Մշակը» ինչպէս սորանից երեք տարի յառաջ, նոյնպէս և այժմ, աշխատում է մենակ. բայց անհամաձայն ենք, որ նա այդքան ժամանակում չը ստացաւ համակրութիւն որ և է կողմից։

Մենք ճանաչում ենք, այո, որոշեալ խումբեր, որոնք «Մշակի» գործունէութեան վրա նայում էին կատաղած դէմքով, նորա յայտնած մտքերը ընդունում էին յիմար ծիծաղով,—բայց դրքա կուսակցութիւններ են և ոչ հասարակութիւն։

«Մշակի» չորս կողմը չը կազմվեցաւ համամիտների նշանաւոր կուսակցութիւն, մենք այս խոստովանում ենք, բայց մեզ պարտաւորութիւն ենք համարում բացարձակ յայտնել, որ գաւառներում «Մշակը» ստացել է իր համակրողներ, գտել է կուսակիցներ...

Եւ այդ փոքր բան չէ այնպիսի հասարակութեան համար, որ երեք տարի յառաջ հայ լրագրութեան վերա նայում էր՝ ինչպէս թուրքը խոզի մսի վրա....

Փոքր բան է միթէ, որ մի լրագիր ամենասուղ ժամանակամիջոցում կարողացաւ զգալի փոփոխութիւն ձգել հայ լրագրութեան մէջ, մի կենդանի զարկ տալ նորա ուղղութեան, որին Յաճկատանի հայ լրագրութիւնն անգամ ուզից հետևել. երեք տարվայ միջոցում կարողացաւ մի բթացած, անտարբեր, անշարժ հասարակութեան անդամների մէջ ձգել մի որ և է շարժում։

Յովհաննէս քահանայ Քաջունունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 28-ից սկսվեցան Թիֆլիսի ազնվական բանկի հիմնողների ընդհանուր ժողովի նստերը, Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Անտոնովի տանը։

***

„Кавказъ“ լրագրում կարդում ենք որ իբր թէ դիտաւորութիւն կայ յուսով հիմնել Թիֆլիսում մի նոր թերթ ռուսերէն լեզուով „Кавказскій Міръ“ (Կովկասեան Աշխարհ) անունով։

***

Նոյն լրագրում կարդում ենք, որ երգեցողութեան ուսուցիչ, պ. Վ. Զիժօվ, հրատարակել է նորերումս երգեցողութեան պիէսների մի ժողովածու զանազան հեղինակների, կովկասեան ուսումնարանների բարձր դասատուների աշակերտաց համար յարմարեցրած։ Շուտով նոյն պարոնը հրատարակելու է երաժշտական ձեռնարկներ ուսումնարանների համար հայոց և վրաց լեզուով.— Բոլոր սրտից աջողութիւն ենք ցանկանում պ. Զիժովին, իր օգտաւէտ ձեռնարկութեան մէջ։

***

Մեր անանապահութիւնը, հողագործութիւնը և գիւղական զանազան արհեստները նահապետական դրութեան մէջ լինելով, մենք միշտ աշխատել ենք, և պէտք է աշխատենք որքան ներում է մեզ «Մշակի» դիրքը և ուղղութիւնը, առաջարկել ընթերցողին գիւղատնտեսական յօդվածներ։ Այս տարի մենք յոյս ունենք աւելի էլ ուշադրութիւն դարձնել այդ մասի վրա և կաշխատենք տալ ընթերցողին ներկայ համարում տրված «Մի օգտաւէտ բոյս» յօդվածի նման կարճ նկարագիրներ և դատողութիւններ գիւղատնտեսութեան և այլ ճիւղերից՝ անային թռչունների, մեղուաբուծութեան, անասնապահութեան մասին, և այլն։

***

Ցաւոնի է, որ զանազան հիմնարկութիւնների տոկոսաբեր թղթերը ընդունվում են որպէս գրաւական կապալների և յանձն առնող հասուցումների (պատասխան) մէջ։ Այժմ ֆինանսների մինիստրութիւնը հրատարակել է „Правительст. Вѣстн“ № 15 մէջ մի ցուցակ, թէ ինչ գներով պիտի ընդունվեն կապալների մէջ զանազան տոկոսաբեր թղթերը 1875 թվի առաջին վեցամսեակը։ Թիֆլիսի առևտրական բանկի ակցիաները, օրինակ, որոնց հասարակ արժողութիւնը 200 րուբլ է իրաքանչիւրինը, պիտի կապալների մէջ ընդունվեն 121 րուբլի գնով, որ անում է 60½ % նրանց հասարակ արժողութենից։ Այդ գինը անհամեմատ բարձր է մնացած ակցիաների չատերից։ Օրինակ Մոսկվայի առևտրական բանկի ակցիա, որ նոյնպէս արժէ 200 րուբլ, պիտի ընդունվի որպէս գրաւական կապալի մէջ միայն 102 րուբլի գնով։ Նոյն քաղաքի վաճառականական բանկի ակցիա (նոյնպէս 200 րուբլ), վճռած է ընդունել գրաւական 104 րուբլի գնով, և այլն։

***

Երկուշաբթի օր, փետրվարի 3-ին Թիֆլիսի թատրոնում կար մի ներկայացումն վրաց լեզուով։

***

Դոկտոր Անդրէաս Արծրունու դասախօսութիւնը ծծումբի մասին, որ նա կարդացել էր յունվարի 12-ին, հրատարակվեցաւ առանձին բրոշիւրայով և ծախվում է «Մշակի» խմբագրութեան մէջ։

***

„Кавказъ“ լրագիրը հաղորդում է որ Բագուի գիմնազիայի վարժապետ Հասան-Բէկ-Մէլիքով դիտաւորութիւն ունի ներկայ տարվայ մարտ ամսից հրատարակել մի լրագիր թուրքերէն լեզուով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑԻՍՈՒՍԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԲԱՐՁՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

Արդէն մի քանի տարի է որ գրեթէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը զբաղած է վառել ուսումնարանական հարցը կրօնական ընկերութիւնների վերաբերութեամբ։ Գերմանիայի և Աւստրիայի մէջ այդ հարցը կարող էր վերաբերել՝ ի հարկէ միայն ստորին և միջին ուսումնարաններին, որովհետև համալսարանները և այլ բարձր ուսումնարանները պետական, թէև ազատ ինքնավարութիւն ունեցող հիմնարկութիւններ են։

Ֆրանսիայում ընդհակառակ համալսարանը այն արտօնութիւնները չէ վայելում, նա անկախ չէ։ Դեռ անցեալ 1874 տարվայ վերջերում կարողացել է մինչև անգամ Վերսալի ազգային ժողովի մէջ յարուցվել հարցը՝ ազատութիւն տալ բարձր ուսումնարաններին։ Այս առաջարկութիւնից ի հարկէ մտադիր էր օգուտ քաղել իր համար կղերական կուսակցութիւնը և եթէ վճռվէր ազգային ժողովից որ ամեն Ֆրանսիացի իրաւունք ունի ուսուցանելու (յօդ. 2-դ), դորանից օգուտ կը քաղէին միայն կրօնական ընկերութիւնները։ Աշխարհականները ոչինչ նպատակ չունենալով հիմնելու մասնաւոր բարձր ուսումնարաններ, կը բաւականանային միայն նորանով որ կը ցանկանային արդէն եղած, պետութիւնից հիմնած ուսումնարանները բարեկարգելու, մտցնելով զանազան նոր ազատութիւններ։ Իսկ կրօնական միաբանութիւնները և ընկերութիւնները այս օրէնքից օգուտ քաղելով կ'աշխատէին ոչ միայն մրցել պետութեան հետ, այլ և գուցէ խլել նորանից նորա իրաւունքը։ Սորանով է մեկնվում որ Վերսալի ժողովի կղերականները առաջարկած օրէնքի առիթով կարծիք ներկայացրին, որով նոքա ցանկութիւն էին յայտնում, որ ոչ թէ ամենայն չափահաս Ֆրանսիացի վայելէր այս իրաւունքը, այլ որ այս իրաւունքը տրվէր միայն կազմակերպված հիմնարկութիւններին։ Սրանք նմանապէս իրաւունք էին խնդրում որ մասնաւոր միջնակարգ ուսումնարանները իրանց պրոգրամը ընդարձակելով, կարողանային և բարձր ուսման համար դասատուներ բանալ։ Այստեղ նրանք աչքի առաջ ունէին որ մասնաւոր միջնակարգ ուսումնարանների մեծ մասը կղերական ուսումնարաններ են։ Ազատամիտ կուսակցութիւնը, որ սկզբում պատրաստ էր համաձայնվել օրէնքի հետ, հասկացաւ կղերականների նպատակները և գուցէ կը միաւորվի այն կարծիքի հետ (պ. Պոլ Բեր) որ պահանջում է բարձր ուսումնարանների վերա իրաւունքը թողնել պետութեանը, մտցնելով նրանց մէջ նոր ազատութիւններ, և ձգտելով նմանեցնել նրանց գերմանական համալսարանների կազմակերպութեանը։ Ամենալաւն է, ասում է ֆրանսիական „Revue Politique“, հետևել գերմանական համալսարանների օրինակին։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ „VOLKS-ZEITUNG“ ԼՐԱԳԻՐԸ

Այդ քաղաքատնտեսական մի օրէնք է, որ երբ որ մի երկրի մէջ թանգագին մետալը՝ ոսկին առատ է,—այն ժամանակ նրա և այլ ապրանքների գնի մէջ հաւասարակշռութիւնը վերականգնվում է նորանով, որ բոլոր մնացած ապրանքների գները բարձրանում են։

Ասում են որ Գերմանիան Ֆրանսիայի հետ պատերազմը աւարառելուց յետոյ, երկու մեծ սխալ է արել՝ մինը որ նուաճել է Էլզաս-Լօթարինգիան, իսկ միւսը որ պահանջել է Ֆրանսիայից հինգ միլլիարդ ֆրանկ ոսկով։

Առաջինի մասին մենք շատ անգամ յայտնած ենք մեր միտքը և համոզված ենք թէ Էլզաս-Լօթարինգիան մի քանի տարից յետոյ բոլորովին կը գերմանանայ, որովհետև բնակիչները գերմանացիք են.... Այդ ոչ թէ միայն սխալ էր, բայց գերմանական քաղաքականութեան հեռատեսութեան և հիմնաւորութեան ապացոյց էր։

Բայց միւսի մասին, այսինքն հինգ միլլիարդ ֆրանկ յաղթված ազգից պահանջելու օգտաւէտութեան մասին՝ իրան Գերմանիայի համար,—մենք բացատական պատասխան պէտք է տանք։ Լցնել մի երկիր անչափ շատ ոսկով, ոչ թէ միայն չէ նշանակում հարստացնել այն երկիրը, այլ ընդհակառակն նշանակում է աղքատացնել նրան, որովհետև ոսկու անչափ մեծ քանակութիւնը նուազեցնում է իրան ոսկու փոխարինական արժէքը, անհամեմատ բարձրացնելով այլ մթերքի և ապրանքների գները, թանգացնելով բնակարանները և բարձրացնելով աշխատող ձեռքերի վարձը։

Մենք աւելորդ չենք համարում արտատպել այդտեղ Բերլինում հրատարակվող համակապիտական „Volks-Zeitung“ գերմանական լրագրից մի յօդված, Գերմանիայի արդեան տնտեսական դրութեան վերաբերութեամբ։ Ահա այդ յօդվածը։

„Այն վատ դրութիւնը որի մէջ գտնվում են մեզանում առուտուրը և արդիւնագործութիւնը, զարմանալի կերպով զանազանվում է Ֆրանսիական այժմեան ծաղկած առուտուրի և արդիւնագործութենից։ Մենք դեռ 1871 թուին ասում էինք՝ այդ միլլիարդները կը ոչնչացնեն մեր արդիւնաբերութեան ոյժը և մեր ընդունակութիւնը մրցութեան մէջ։ Այդ ճշմարտութիւնը բարոզված է այժմ այնպիսի լրագիրներից, որոնք այն ժամանակ բաւական խօսքեր չէին գտնում միլլիարդների բարերար ազդեցութիւնը գովելու համար։ Իսկ այժմ հասկանում են որ ոսկեայ անձրևը ստիպում է բարձրանալ ամեն առարկայի գինը, իսկ առարկաների քանակութիւնը կամաւոր կերպով չէ կարելի բազմապատկել։ Այժմ ճանաչում են այն ճշմարտութիւնը, որ ոսկիների անձրևը թանգացնում է բոլոր նիւթերը. իսկ առաջին հարկաւորութեան նիւթերի թանգանալը, թանգացնում է և աշխատող ձեռքերը, և որ այն բոլոր աշխատանքները, որ օտար երկիրները մեզ մօտ էին պատուիրում, այժմ կորած են մեզ համար, որովհետև մարդիկ գիժ չեն, որ մեզ վճարեն աշխատանքի համար աւելի բարձր գներ, երբ նոքա կարող են նոյն արվեստական արդիւնքները ստանալ այն երկիրների գործարաններից, որտեղ դեռ եղած չէ ոսկիների անձրևը։

„Իսկ Ֆրանսիան անցեալ տարի շահաւէտ առևտրական գործեր է կատարել։

„Այդ երկրում այլ և այլ մթերքը աւելի էժան են, մշակների վարձը աւելի նուազ է, եռանդը և շահվելու ցանկութիւնը աւելի մեծ է քան երբէք և ամեն հասկացող մարդը կը խոստովանի թէ այդ են արդիւնագործութեան և առուտուրի ծաղկման պատճառները Ֆրանսիայում։ Մենք տեսնում ենք թէ ի՞նչ էր մեզանում ոսկու անչափ մեծ քանակութեան հետևանքը,—ի՞նչ պէտք է յուսանք այժմ թղթադրամից“։

ՍՈՎԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՄԷՋ

Փոքր Ասիոյ սովատանջ ժողովրդոց օգնութեան համար մայրաքաղաքիս մէջ կազմուած անգղիական մասնաժողովը յունվ. 7 թուով նամակներ ստացած է Պ. Պ. Պարրովս և Ֆարնսվօրթ անգղիացիներէն, որ սովեալ գաւառները պարտիզ և մասնաժողովին ղրկած օգնութիւնները կարօտելոց բաշխելու պաշտօն ունին, և կը ծանուցանեն թէ անօթութենէ չարչարուող և մինչև իսկ մեռնող դրժբաղդներ տակաւին պակաս չեն տեղ տեղ։

Կեսարիոյ մէջ մարդ գլուխ 12 օխայ ցորեն բաշխուեր է կառավարութեան կողմէ, բայց այս բաշխումը կարօտելոց մէկ քառորդին հազիւ բաւեր է։

Ալիս գետին քով գեղեր կան եղեր, որոց բնակիչք յետին կարօտութեան մէջ են, այգիներուն մէջ թափթփած խաղողի կուտերը ժողովելով կը խորովին կուտեն եղեր, և շատեր այս կուտերն ալ չը գտնելով անօթի մեռեր են։

Կառավարութեան կողմէ սերման համար գեղացւոց տրուած ցորենը, կըսէ յիշեալ նամակներէն մին, ներկայ պիտոյից մէկ ութերորդին հազիւ կը բաւէ։

Հօրան անուն թուրքաբնակ գեղի մը մէջ մարդ մ'իւր կինը թողուցեր է դիեցիկ որդւոյն

հետ, և ինքն երեք մանչ տղայքն առնելով, որոց մեծն հազիւ ութ տարեկան կար, գիւղէ գիւղ թափառիլ սկսեր է չորսաբնակ հացի պատառներ գտնելու համար. վերջապէս ապարդիւն եղնելով, գեաին քովէն անցած ժամանակ բռներ երկու մանր որդիքը գետը նետեր է. իսկ մեծ որդին փախեր է։ Այլն ալ անելութեամբ եղեր է։

Այս սրտաճմլիկ տեղեկութիւնը տուող Պ. Ֆարնավօրթ կը գրէ թէ Հօրանէն Ալէնքա անուն հայաբնակ գեղն երթալով 65 հողի գտեր է հոն յետին չքաւորութեան մէջ, և օգնութիւն բաշխեր է անոնց. ուրիշ երկու քրիստոնեայ գեղեր ալ գնացեր և սիրտը կտրատեր է տեսնելով, որ խեղճերուն տուները ոչ ծածք ունէին, ոչ դուռ, ոչ պատուհան, և առատ ձիւն կը տեղար։

Պ. Ֆարնավօրթ յունվ. 12 թուով Լոզդատէն հեռագիր գրկած է թէ շարունակ ձիւն տեղալուն և սաստիկ ցուրտ տիրելուն պատճառաւ աղքատ ժողովրդոց տառապանքը բազմապատկեր է։

Այս հեռագրին վրայ օգնութեան մանաժողովն 700 Օսմանեան լիրա գրկեց Պ. Ֆարնֆօրթի, որպէս զի շուտով Լոզդատու գաւառին սովատանջ թշուառներուն օգնութեան հասնի։

(Մասիս)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԱՒ

Վերջին անցքերը Ֆրանսիայում պարզ ցոյց են տալիս որ երկիրը արագ քայլերով գնում է դէպի միապետութիւն։ Վերսայլի ազգային-ժողովի նստերը ազմալի էին։ Վերքննելով սահմանադրութեան առաջին յօդուածը, առաջարկեցաւ ժողովին հետեւեալ ձևակերպութիւնը՝ „Օրէնդրական իշխանութիւնը կատարվում է երկու ժողովների միջոցով պատգամաւորների ժողովի և սենատի միջոցով“։

Զախ կենտրոնը կամենում է այլապէս ձևակերպել այդ յօդուածը, որտեղ յիշվեր և կառավարութեան ձևի մասին։ Հապ. Լաբուլէից առաջարկված ձևակերպութիւնը՝ „Հանրապետական կառավարութիւնը կազմվում է երկու ժողովներից և նախագահից“։ Եթէ այդ ձևակերպութիւնը ընդունվէր, այն ժամանակ, կարելի է ասել, որ հանրապետութիւնը հաստատված է։ Բայց ոչ.—Լաբուլէի առաջարկութիւնը մերժվեցաւ 359 ձայների բազմութեամբ 335 ձայների դէմ։ Ուրեմն պահպանողական հանրապետութիւնը ջուրն ընկաւ։ Ազգային-ժողովը զարձեալ մի անգամ ապացուցից որ նա լսել էլ չէ կամենում հանրապետութիւն բառը։ Առաջին յոդվածը, որ մենք յիշեցինք, և որ առաջարկված էր Լե�սուն անդամներից բաղկացած յանձնաժողովից, ընդունվեցաւ։ Ուրեմն իսկապէս հանրապետութիւն չը կայ, բայց կայ մի մարշալ-նախագահ և երկու ժողովներ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական „Bulletin de la Soicété de Geographie“ աշխարհագրական ամսագիրը հրատարակել է Նորերումս շատ հետաքրքիր, բայց միևնոյն ժամանակ սիրտը ցաւեցնող վիճակագրական տեղեկութիւններ, թէ որքան ճանապարհորդներ Աֆրիկայում ներկայ դարս սկզբից՝ անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, հոլանդացիք մեռել են այդ երկրում, կամ զանազան մայրդ, սարսափելի հիւանդութիւններից, կամ սպանված են եղել վայրենի բնիկներից։ Հիղինակը, պ. Դիվէրիէ, որ ինքն էլ Աֆրիկայում եղել է, հաշում է այդ երկիրը հետազօտելու իրանց նուիրված զոհերի թիւը մինչև 180։

***

Նորերումս մեռաւ Փարիզում մի պառաւ մարդ, որ շատ համեստ կերպով ապրում էր, միայն իր բոլոր աւելորդ փողերը գործ էր դնում հին և գրեթէ անպէտք գրքեր առնելու։ Այդպիսով կազմեց նա քանի մի հազար հատորներից բաղկացած գրադարանը։ Չունենալով քաղաքում ազգական, նա կտակեց իր բոլոր կարողութիւնը (տաս հազար ֆրանկ դուսար), և ամբողջ գրադարանը երկու գիւղացի ազգականներին։ Կարող էք երևակայել ձեզ գիւղացիների ուրախութիւնը, երբ նրանց, կարդացվում էր կտակի սիկղբը,—բայց յանկարծ, կտակի վերջում հանդուցեալը մի սարսափելի պայման է դնում իր ժառանգներին՝ որ նոքա ոչ թէ միայն իրաւունք չունենան ծախել հաւաքած գրադարանը, բայց և պարտաւորվէին այդ գրադարանը առանձին վայելուչ տեղում պահել և կազմել տան բոլոր անկազմ գրքերը.... Խեղճ գիւղացիք տեսնելով որ գրադարանի համար առանձին տեղ վարձելը և քանի մի հազար հատորներ կազմել տալը կարող է նրանց և ամբողջ ժառանգութիւնը, այն տասը հազար ֆրանկն էլ նստել,—զանգատեցին կտակի անկանոնութեան դէմ դատարան։

***

«Մասիս» լրագրում կարդում ենք, որ Փոքր Ասիայի սովատանջ ժողովրդի համար Անգլիայի Էդինբուրգ քաղաքի մէջ եղած հանգանակութեան գումարը հասել է 2870 Անգլիական լիրայի, մի գումար, որ Եւրոպայի գլխաւոր քաղաքներից ոչ մէկի կողմից տեսնված չէ։

***

Փետրվարի 4-ին եղաւ Թիֆլիսի Դումայի ընդհանուր ժողով։ Ժողովի սկզբից նախագահը յայտնեց թէ պ. Խանջիևը որ առաջ հրաժարվում էր վարչութեան անդամի պաշտօնից, այժմ համաձայն է ընդունել այդ պաշտօնը։ Ուրեմն պէտք է քուարկվեր միայն մի անդամ։ Սորանից յետոյ մասնաժողովի զեկուցումն լսելոց յետոյ, ժողովը վճռեց քուէարկել նորա առաջարկած հարցը արդեօք հարկաւոր է աւելացնել վարչութեան անդամների առձիկը, թէ ոչ։ Այդ հարցը վճռվեցաւ քուէարկութեամբ որի հետևանքը այն էր, որ իւրաքանչիւր անդամի նշանակվեցաւ 3000 բուրլ առձիկ։ Սորանից յետոյ անցան երրորդ անդամի ընտրութեանը։ Ընտրվեցաւ պ. Փոնդօէվը։ Պրիկազի դիրեկտորը ընտրվեցաւ պ. Գ. Միրիմանովը։ Անշարժ կայքերի գնահատողներ (օցենշչիկի) ընտրվեցան Քեթխուդօվ և Շահդինարօվ։ Հետևեալ չորեքշաբթի օրը կրկին նշանակվեցաւ նիստ։

***

Եկատէրինօդարից մեզ հաղորդում են, հետևեալ լուրը։ Նորերումս մի գեղեցիկ օր, ժամ 4-ին կէս օրից յետոյ, երբ ամբողջ քաղաքը փողոցներում զբոսնում էր, մի մարդ մօտենում է ձիով մի ժամագործի խանութին, վեր է գալիս ձիուց և սկսում է բացարձակ յարձակել խանութից պատեայ ժամացոյցները։ Երբ ժամագործը սկսում է ընդդիմանալ այսպիսի կամայական վարմունքին, անծանօթ մարդը հանում է մի ատրճանակ և տեղի վրա սպանում է խանութի տիրոջը յետոյ նստում է կրկին ձիու վրա և հեռանում...

***

Փետրվարի 2-ին և 3-ին սկսեց ձիւն գալ Թիֆլիսում և նրա շրջակայքում։ Սարերի վրա նստում է, իսկ բուն քաղաքում գալուն պէս խլվում հալվում է։

***

Մենք լսում ենք, որ իբր թէ արդէն վճռված է չինել Թիֆլիսի Թատրոն կրկին հին թատրոնի տեղը, այն է Թամաշօվի քարվանսարայի չինութեան մէջտեղ։

***

Ֆրանսիայում կան այժմ 145,000 ուսումնարաններ, որտեղ դաստիարակվում են 3,625,000 երկու սեռի երեխաներ։

***

Շվէյցարիայից գրում են „Русск. Вѣд.“ լրագրին, որ անցեալ տարվայ դեկտեմբեր ամսին գարձեալ մի ռուս կին տիկին Զիբարտ հարցաքննութիւն տուեց Բերնի համալսարանում և ստացաւ բժշկութեան դոկտորի աստիճանը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուտով լոյս կը տեսնէ „Վաբդ և Մանրշակ“ վիպագրով (եղերական վէպ գիւղական կեանքից) գիրքը։

1 (3) Գ. Շահվերդեանց

ՇԱՄԱԽԻՈՑ երկտեռ ուսումնարանների զբաղարանի գանձապահ Ա. Մէլիք-Շահնազարեանցը նոյն գրադարանական ընկերութեան կանոնադրութեան համաձայն, խնդարկաբար խնդրում է բացակայութեան մէջ այլ քաղաքներում գտնուող գրադարանի ներքոյ անուանեալ յարգելի անդամներից, այն է Խորէն Վարդապետից 'ի Շուշի, Յովսէփ Վարդապետից և Հայրապետ Ղուկասեանցից 'ի Ալէքսանդրապոլ, Խորէն քահանայ Մելքոնեանցից, Գաբրիէլ Բամանոսկուց, Ներսէս Տէր Սարգիսեանցից և Մկրտիչ Ալթաբէկեանցից 'ի Բագու, և Շահնազար բէկ Վլասեանցից 'ի Ղազախ, փութալ հասցնել գրատան թէ անցեալ ամբողջ տարվայ, թէ այն 1875 թ. Յունվար տրեատական տուրքը, քանի գիտենալով, որ այդ փոքրիկ գրադարանը բաւական նեղութիւն է զգում իւր գրութիւնը բարեբաղդ հասցնելու համար, ժամանակին իրան բարերարներից օգնութիւն չը ստանալով։ Մէլիք-Շահնազարեանցը կարևոր է համարում յայտնել ևս թէ բացակայութեան մէջ լինող անդամները, յետ ուղարկման իւրանց վճարը, ստանալու են գրատան գործակատարներից առանձին նամակով տեղեկութիւն, իսկ քաղաքում լինողները, որոնցից նոյնպէս խնդրվում է շուտով հասցնել իւրանց անդամականները,—ապահովագիր նոյն իսկ գանձապահից։

29 յունվարի

Ա. Մէլիք-Շահնազարեան

Вышла и продается
Въ Редакціи газеты „Мшакъ“
ЛЕКЦІЯ Д-РА АНДРЕАСА АРЦРУНИ
СѢРА
ея химическія свойства
Техническое примѣненіе и геологическое положеніе
(цѣна 20 коп.)

Родители, желающіе готовить своихъ дѣтей въ Реальное Училище для 1-хъ четырехъ классовъ, могутъ обратиться въ книжный магазинъ г. Энфіаджіянца или въ частное училище г. Балахова.

2 (3)

ՄԻ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ որ եկած է ՓԱՐԻԶԻՑ ցանկանում է ՖՐԱՆՍԻԵՐԷՆ լեզուի դասեր տալ։ Ցանկացողները կարող են դիմել Արարի ֆոտոգրաֆիա։ 3 (5)

ՏԵՂԵԿԱՑՈՒՑ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Փետրվարի 5-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուամպրիալ). .	5	90
Բամբակ երևանու. . .	4	80
Ամերիկայի սերմից	6	65
Բուրդը թուշի . . .	6	40
թարազամի . .	4	
Շաքարը ռոսի (բրօցկու)	8	55
„ միւս տեսակը .	8	40
„ զաղրան, տրանզիտ. . . .	4	80
„ մաքսը վճարած	7	80
Շաքարաւազը Ռոսի . .	6	90
Ղահվա Լիսնի լաւը. .	18	
„ Մօկօ շատ լաւը	19	60
„ Մարմնկօի ցածր	15	
Աղիւրը Երևանի. . .	1	
Աղիւրը Գանջա հասարակ. . . .	1	
„ Շորագեալու. .	1	20
Գարին	„	60
Մոմ.	10	40
Փոխանակագիր Պօլսի	6	40
„ Դավրէժի	4	46
Լօնդոնի կուրսը (Օդեսայի վիրայ) 1 լիրան արժէ. .	7	17
Մարսէլ և Փարիզ 351 ֆր. արժէ	100	

ՀԵՌԱԳԻՐ

Քանի բառից կազմված հեռագիրը ածէ՝

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի գլխաւոր քաղաքները.	1	
Նոր-Նախիջևան.	1	
Մոսկվայ, Ս. Պետերբուրգ. Նիժնի-Նովգորոդ .	2	
Աւստրիա . . .	2	75
Անգլիա. . . .	3	75
Գերմանիա. . .	2	63
Թիւրքիա . . .	3	
Ֆրանսիա . . .	3	50

ՆԱՒԵՐ

Օդեսայից Փոթի (ամառը) նաւը դուրս է գալիս հինգշաբթի օրերը ժամը 2-ին կէս օրից յետոյ։

Փոթիից Օդեսա կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ։

Օդեսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի օրերը 3 ժամին։

Փոթիից Օդեսա չորեքշաբթի օրերը առաւօտեան։

Փոթիից Կ. Պոլիս նաւը դուրս է գալիս երկուշաբթի առաւօտները։

Կ. Պոլսից Փոթի կիրակի առաւօտները։

ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ առաւօտեան։

Մինչև Սուրամ (խառն գընացքը) երեկոյեան 8 ժամ. 17 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	8. 18	8. 17
Մցխէթ . . .	9. 18	10. 48
Գորի. . . .	11. 39	1. 43
Սուրամ. . .	1. 52	4· 30
Քութայիս . .	7. 55	
Փոթի. . . .	11. 27	

	առաւօտ.
Փոթիից . .	7. 38
Քութայիս . .	10. 12
Սուրամ. . .	4. 57
Գորի. . .	7. 23
Մցխէթ. . .	9. 52
Թիֆլիս. .	10. 49

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գները Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՈՍՏ

Ընդունում է

Ռուսաստան և Եւրոպա ամեն օր, բացի կիրակի։

Երկուշաբթի

Երևան (Ջուլֆ, Պարսկաստան) Օզուրգէթ, Ախալցխայ, Բէլի Կլիուչ, Բագուի և Գանձակի նահանգ (ծանր փոստ)։

Երեքշաբթի

Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ (ձմեռը) Բագուի և Գանձակի նահանգներ (թեթև փոստ)։ Նովի (Յարսկի Կօլօդցի, Զաքաթալ, Աղնախ, Թէլաւ, Լաղօդէխ) թեթև փոստ։

Չորեքշաբթի

Երևան, (Ջուլֆ, Ալէքսանդրապոլ, Նոր-Բայազեդ) Զուգդիդ։

Հինգշաբթի

Սև և Միջերկրական ծովի տաճկաց նաւահանգիստներ։

Ուրբաթ

Երևան (Ջուլֆ, Պարսկաստան, Ալէքսանդրապոլ) Օզուրգէթ, Ախալցխա, Բէլի Կլիուչ, Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ, (ամառը), Բագուի և Գանձակի նահանգները (թեթև փոստ)։

Շաբաթ

Նովի, (Յարսկ. Կօլօդ. Զաքաթ. Աղն., Թէլաւ).

Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու կէտեր ամեն օր, բացի կիրակի։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակը ածէ. .	5
Ռուսաստան նամակը	10
Գերմանիա, Աւստրիա	10
Ֆրանսիա.	13
Անգլիա	14
Շվէյցարիա	14
Թուրքիա (Կ. Պոլիս .	20
Թիւրքիա (ցամաք) . .	20
Իտալիա	16
Ամերիկա	28
Պարսկաստան . . .	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՈՍՏԻ ԿԱՌՈՒՑՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկաւկաս ամեն օր ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին։

Թիֆլիսից Պիատիգորսկ, Ստավրապոլ և Բոստով հինգշաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Ս. Պետերբուրգ. Յուսահատված ուսանող. Ձեր յօդվածը չի տպվի, մանաւանդ որ դուք ձեր ազգանունն էլ յայտնած չէք խմբագրութեանը։

—Ախալքալաք. Ց. Ք. Ք. Ստացանք 15 բուրլ ծախած «Փունջերից»

—Մոսկվա. Զ. Մ. Շատ ցաւում ենք որ «Մշակի» ոչ գիրքը և ոչ ուղղութիւնը չեն թոյլ տալիս տպել աստուածաբանական-պատմական-պօլէմիական բովանդակութեան յօդվածներ։

—Հին-Նախիջևան. Գ. Ա. Ձեր յօդվածը չենք տպի և արժանի էլ չենք համարում պահել այդ տեսակ յօդված՝ ամբողջ մի յօդված երկար ու բարակ դատողութիւններով այն բանի մասին, թէ մի եպիսկոպոս ձեռնադրել է քահանայ մի անարժան անձն,—կարծես նոր կամ նշանաւոր բան լինէր....

—Ատարախան. Առաքելեան. Շատ ուրախ ենք եթէ սկսէք աշխատակցել։ Բայց ձեր առաջին յօդվածը չի տպվի, որովհետև արդէն ունենք այդ ժամին նամակ։ Տուրգենևի „Отцы и Дѣти“ բոմանի թարգմանութիւնը չենք կարող տպել «Մշակի» մէջ։

—Բագու. Զ. Ղազանց. Մի բուրլ հայցրինք Շահազիզեանի գրավաճառանոցը։

Дозволено Цензурою, 5 Февраля 1875 г. Тифлисъ. Типографія Меликова и К°. Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ